**Արձանագրություն N 3**
**«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի** բացման **և գնահատման նիստի**

ք. Երևան

19 ապրիլ 2023թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ ՝ Վ.Վարդապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Մուրադյան
Վ.Մանուկյան

Քարտուղար՝ Դ. Միերյան

1. **«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/26»** ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2023թ. ապրիլի 19-ին, ժամը 10:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է ապրիլի 20-ին, ժամը 10:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուց հետո՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակում:

**«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

02 մայիս 2023թ.
ժամը՝ 12:00

6. **«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/26»** ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2023թ. ապրիլի 19-ին, ժամը 10:00:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | ԱՁ Գևորգ Աղաբայան | ք. Երևան, Եր. Քոչարի 23շ,բն77, հեռ. +374 91 451 223 |
| 2 | Թոփ Թրեյդ ՍՊԸ | Տեղեկատվությունը կցված չէ |
| 3 | ԱՅՍՈԼՈՒՇՍ ՍՊԸ | ք. Երևան, Լենինգրադյան փող. 23/11 շենք, 96 տարածք հեռ. 37460700111, |
| 4 | Լեդարմ ՍՊԸ | ք.Երևան Ֆրունզե 13, հեռ. +374 33058800 |

| | | |
|---|---|---|
| 5 | Գ.Գ.Է. հոլդինգ ՍՊԸ | ք.Երևան Մոլդովական փ.48/1 25բն, հեռ. +374 77666566 |
| 6 | ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ | ք.Երևան,Երկաթուղային.4Փ/2 հեռ. +37493666330 |

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Գնման առավելագույն նախահաշվային գինը | *Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)** | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ԱՁ Գևորգ Աղաբալյան | | Թոփ Թրեյդ ՍՊԸ | | ԱՅՍՈԼՈՒՇՍ ՍՊԸ | | Լեդարմ ՍՊԸ | | Գ.Գ.Է. հոլդինգ ՍՊԸ | | ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ | |
| | | | | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալԱ ԱՀ | առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալԱԱՀ |
| 1 | համակարգիչ ամբողջը մեկում | հատ | 1 | 1 100 000 | 690 000 | - | 700 000 | 840 000 | 905 850 | 1 087 020 | 1 000 000 Մերժված | 1 200 000 Մերժված | 50 000 000 Մերժված | 50 000 000 Մերժված | 150 000 000 Մերժված | 180 000 000 Մերժված |
| 2 | LED էկրան իր համակարգով | հատ | | 4 249 900 | 4 116 000 | 4 116 000 | 407 400 | 488 880 | - | - | 4 300 000 Մերժված | 5 160 000 Մերժված | 50 000 000 Մերժված | 50 000 000 Մերժված | 150 000 000 Մերժված | 180 000 000 Մերժված |

- **Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն <<առանց ԱԱՀ>> սյունակը**

9. Համակարգում ավտոմատ մերժվել են «Լեդարմ» ՍՊԸ-ի, «Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊԸ-ի և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի հայտերը:

10.Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է հանդիսանում Գևորգ Աղաբալյան ԱՁ-ն, իսկ երկրորդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է հանդիսանում «Թոփ Թրեյդ» ՍՊԸ-ն:

11. Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց.

<u>11.1 Գևորգ Աղաբալյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը</u> համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

<u>11.2 «Թոփ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին մասնավորապես՝ հայտով չեն ներկայացվել դիմում հայտարարությունը և իրական շահառուների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև լրացված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:</u>

Վերը նշվածով պայմանավորված հանձնաժողովը որոշեց, հրավերով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Թոփ Թրեյդ» ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

12. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 2023թ. մայիսի 4-ին ժամը 12:00, ք. Երևան, Մ.Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակ:

**«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

04 մայիս 2023թ.
ժամը՝ 12:00

13. Հանձնաժողովը արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Թոփ Թրեյդ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունը:

14. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 2023թ. մայիսի 11-ին ժամը 15:00, ք. Երևան, Մ.Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակ:

**«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

11 մայիս 2023թ.
ժամը՝ 15:00

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Թոփ Թրեյդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը, հանձնաժողովը որոշեց՝ «Թոփ Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարել չկայացած:

14. Ներկայացված հայտի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, **«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/26»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից Գևորգ Աղաբալյան ԱՁ-ին:

15. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

16. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ __________ Վ.Վարդապետյան

Հանձնաժողովի անդամներ՝

__________ Վ.Մանուկյան

__________ Ա.Մուրադյան

Քարտուղար՝ __________ Դ. Միերյան